ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

28.01.2024 10:28

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սիրելի հայրենակիցներ, գործընկերներ,

Զինված ուժերի նվիրյալ սպաներ և զինծառայողներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայոց բանակի կազմավորման 32-րդ տարեդարձի առթիվ:

Հունվարի 28-ը հայերիս արժանապատվության ու հայրենասիրության մասին վկայող ամենակարևոր տոներից մեկն է:

Հայրենասիրությունն ու պատվախնդրությունն էին այն ներուժը, որը մեր ժողովրդին հնարավորություն տվեց դառնալու հզոր հենասյուն՝ Հայոց բանակի կազմավորման համար:

Ստեղծման օրից ի վեր հայկական բանակը շարունակում է դիմագրավել արտաքին թշնամիների հարձակումներին՝ հաճախ պայքար մղելով մի քանի բանակի և վարձկան ահաբեկիչների դեմ, ինչպես եղավ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ:

Հավերժ փառք այն հերոսներին, ովքեր հայրենիքի համար մղվող գոյամարտերում անմնացորդ նվիրումով հայրենիքը գերադասեցին իրենց կյանքից: Վերջին պատերազմում նրանց թվում էին նաև մեր փաստաբան գործընկերների որդիները՝ Լևոն Լևոնյանը, Միքայել Դանիելյանը և Հրաչիկ Ավետիսյանը:

Խոնարհում ու խնկարկում նրանց պայծառ հիշատակին:

Ծանր կորուստներից հետո, այսօր էլ Հայաստան աշխարհը կանգնած է խաղաղությանը սպառնացող նոր մարտահրավերներին դիմակայելու լրջագույն խնդիրների առջև, և մեր մեծագույն հույսը շարունակում է մնալ հայոց մարտունակ Բանակն՝ իր խիզախ հայորդիներով:

Պատմական անժխտելի փաստերը վկայում են, որ Հայոց բանակը կարող է նոր հաղթանակներ կերտել, կարող է իրականացնել Հայաստանն ու Արցախը վերամիավորելու բոլորիս մեծագույն երազանքը՝ հետևելով հզոր ու միասնական հայրենիք ունենալու աննահանջ գաղափարին:

Աստված զորավիգ Հայոց բանակին և հայ զինվորին:

Հարգանքով՝

Սիմոն Բաբայան

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })